Դ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 19 ՅՈՒՆՈՒԱՐ 1902

ԺԱՆՈՒՑԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուլկարիոյ համար
Տարեկան 12 ֆր.
Վեցամսեայ 6 »
Օտար աշխարհի համար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 տ.
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
Ծանուցմանց տողը առաջին երեսին համար 40ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքէն աւելի անգամներու համար 20 %o զեղչ կըլլայ.

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

Թիւ 384

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէով.

Редакция навѣстникъ «Шаржумъ» Варна

Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

Գրութիւնք ետ չեն տրուիր

Արտասահմանի ձեռքէ
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռքէ
≍ 15 ՍԱՆԹԻՄ ≍

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՇԱՐԺՈՒՄԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԽԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

Ս. ԳԱԲՐԻԵԼԵԱՆ

Գլխաւոր գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ՍՕՖԻԱ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ.

Տոմսակ գնել փափագողները կրնան իրեն դիմել՝

Զար-Պորիս փողոց Վառնա

ՀԵՐՈՍԻՆ

Եւ դուն տմեհի, անգութ ու հպարտ,
Անցար բռնութեան սեւուղին քարուտ
Փշրելու շղթայք հէ՜ք եղբայրներուդ,
Որք բանտերու խորն հեծէին անպարտ.

Թռա՛ր հըրափայլ, վրէ՛ժ լուծեցիր
Վրէժխնդիր սըրտիդ կատաղի աւիւն
Ցագցի՛ր, թափեցի՛ր թշնամու արիւն
Այլ աւա՜ղ.. ինկա՛ր թակարդն գազիր.

Սընապարծ թուրքերն ծափեն ու խաղան...
Ողբաձայն գետին ափէն մահաբոյր
Ուր վաղէր հծծել ողբալի՝ զեփիւռ,
Ո՜հ բարձրացուցին գքեզ կախաղան.

* *
*

— Է՜հ վատթար սո՛ւս ինչ է ծափ խաղդ
Մահ և կախաղան, հայուհեն միայն
Շանթեր պիտ' տեղայ գլուխդ՝ ապագայն
Եւ քու ծափդ խաղդ, պիտի լինի քու մահդ.

— Եւ դուն ո՛վ անմահ անձնուէր հերոս
Հանգչիր յաւիտեան. ընկերներուդ նման,
Պաշտելի է մեզ քու թանկ գերեզման,
Ու յիշատակդ՝ չանթ մ'թուրքին բառբառոս.

ՀՐԱԿՆ

Վառնա 15 Յունուար 1902

ՈՐՉԱՓ ՇՈՒՏ

Դեռ երէկ ֆրանսական կառավարութիւնը Պարիզէց արտաքսում էր Սուլթան Համիդի լրտեսներին, իսկ այսօր նոյն այդ կառավարութիւնը «երիտասարդ» թուրքերին արգիլում է Պարիզի մէջ ժողով կազմել.

Դէլկասէն արդեօք ամաչո՞ւմ է, թէ ո՛չ. ո՜րչափ շուտ մոռացաւ այդ պարոնը Սուլթանի հանդէպ իր, դեռ երեկ, բանած գիրքը.

Դէլկասէն, որ տրամադրութիւններ ունէր տխրահռչակ Հանոտօն մոռացնել տալ, կամաց կամաց մտնում է նրա ընթացած շաւղի մէջ.

Սակայն աշխարհում միայն Դէլկասէն չէ այդպէս դիւանագէտների մէջ. Մանաւանդ եթէ այդ դիւանագէտները վարիչ են իրենց երկրի քաղաքականութեան. Ամէն մի դիւանագէտի մէջ, որքան էլ նա ազնիւ, գաղափարական և պատուէր հռչակուած լինի, մեծ տոկոս խաբեբայութիւն, ստութիւն և լրբութիւն կայ.

Ուրեմն կատարեալ յիմարութիւն է ու է սպասել ժողովրդի կողմից այդ դիւանագէտներից, որքան էլ նրանք ազնիւ հռչակուեն, օգուտ սպասել իրենց վիճակը թեթեւացնելու համար,

Ժողովրդներին ազատութիւն են տալիս ոչ Դէլկասէները. այլ Գարիբալդիները—Զիպրիաններըն Կոշուտները, Լեւսկիները և Բօցարիսները. Այստամբ, ճնշուող ժողովրդների դիւանագիտութիւնը պէտք է մարմնացած լինի սրի, կրակի և գնդակի մէջ. դրանք արինոտ դիւանագիտութեան զէնքերն են, որոնք զօրով, պատռում, կտրում և այրում են Դէլկասէ Լօրանով, Մէտտէրնիխ Բիկօնսֆիլդ դիւանագէտների կապած քաղաքական հանգոյցները և ամէն պահանջող ժողովրդի տալիս այն, ինչ որ նրանց պէտք է.

ՎԱՐԴՕ

Ի՞ՆՉ ՊԻՏԻ ԸՆԵՆՔ

Գաղղիա եւ Հայաստան վերնագրիտակ գրեցինք տակաւին քանի օր առաջ Եւրոպայի առաջնակարգ քաղաքակիրթ ազգերէն Գաղղիոյ երեսփոխանական ժողովին մէջ հայկական խնդրոյն նկատմամբ եղած հարց ու պատասխանը.

Ընկերվարական մը ինչ ոգիով կուզէ թող ըլլայ, ըլլայ ազգային կուսակցական ոգիով, ըլլայ ընդհանուր ընկերական զգացումով արտաքին գործոց նախարարութեան ներկայ սարւոյս պիւտճէին առթիւ կը գատափետէ կառավարութիւնը թէ ինչո՞ւ Միտիլլի կղզին պաշարած ժամանակ հայոց համար ալ բան մը չըրաւ. մինչդեռ պիտի կրնար բան մը ընել, բան մը պահանջել եւ ընդունել տալ Սուլթանին ի հանդարտութիւն եւ յապահովութիւն տառապեալ ժողովրդի մը:

Արտաքին գործոց նախարարը Տէլգասէ, չոր ու ցամաք լեզուով մը կը պատասխանէ թէ Գաղղիա միայնակ բան մը չի կրնար ընել հայոց համար առանց բոլոր եւրոպական տէրութեանց համաձայնութեան, քանի որ ամբողջ Եւրոպա ստանձնած է եւ ստորագրած Պերլինի դաշնագրութիւնը եւ կը յաւելու թէ նորէն երբեմն բարեխօսած է թուրքին ի նպաստ հայ ժողովրդին.

Ի՞նչ խնդրի համար միջնորդած է. չըսեր. կարծեմ ոչ մէկ հայ ալ գիտէ որ Գաղղիա բան մը ըրած է հայոց համար. հայուն ցաւերը միշտ ցաւ մնացած են. ոչ մէկ վէրք չէ սպիացուած, ոչ մէկ տառապանք չէ թեթեւցած եւ՝ նոր ցաւալին է, կարծես աւելի վրայ տրուած են. ընդունինք որ Սուլթանին զգացուցած ըլլայ թէ յախուռն չի գործէ, հարիւրներ ու հազարներ մէկէն չջարդէ, այլ մէկիկ մէկիկ եւ այս գաղտնի որ Եւրոպայի ժողովուրդը չլսէ. թէ ոչ հաւատալի բան է որ Գաղղիոյ շնորհիւ բան մը եղած ըլլայ հայոց եւ Տէլգասէ չգիտէ զայն ու չպարծենայ, կաթոլիկ ժողովրդին համար աշխատիլ չի նշանակեր, հային համար աշխատել.

Բայց այս չէ ամէնը, գլխաւոր տեղը այն կէտը է որ Տէլգասէ կը համարձակի յայտարարելու որ գործը ուն խնդիրը կը կայանայ ընդհանուր բարեկարգութեան եւ ոչ թէ այս կամ այն ազգին առանձնաշնորհման մէջ եւ թէ քաղաքականութիւնը ու մարդկութիւնը մեծ եւ լաւ գործ մը ըրած պիտի ըլլան եղեր, թէ ձեռք բերուի այս արդիւնք.

Խելահաս եւ զգացումի տէր հայ մը չեկայ կարծեմ, որ իրեն վիճակին որ եւ է ժողովուրդի վիճակը բարւոքման չի փափաքի, սակայն ո՞ր խելացի հայ, ո՞ր խելացի եւրոպացի կրնայ հաւատալ, որ Տաճկաստանի մէջ ընդհանուր բարեկարգութիւն մտցնել կարելի է. գոնէ հարիւր տարիներէ ի վեր, Պալքանի փոքրիկ ազգերէն որին ազատագրութեան խնդիրն որ եղաւ, միշտ յեղյեղուեցաւ ընդհանուր բարեկարգութեան խնդիրը եւ նորէն այդ տառապեալ ժողովուրդներէն մէկին ալ չի գլացուեցաւ իրեն ազգային ազատութիւն, բոլոր եւրոպա միացած ինքնօրէնութիւն տուին յոյնին, ուլահին, Սերպին եւ Պուլկարին. զի Եւրոպան ինքն ալ շատ լաւ գիտէ, որ թուրքը ինքզինքը չի կրնար բարեկարգել, զի ոչ տրամադրութիւնն ունի եւ ոչ կարողութիւն եւ ասոր համար ալ Պալքանի ժողովրդոց իրաւունքը վաղ թէ անագան ճանչցած է եւ սրբագործած, որով միայն ազատուած է ինք գլխի ցաւերէ, ազատած է կորուստէ ժողովուրդներ, որ այսօր կապրին իբրեւ մարդ.

Ըսե՞նք, որ Եւրոպա այսօր համոզուած է, թէ թուրքիոյ մէջ կարելի է ընդհանուր բարեկարգութիւն մտցնել.

Մեծապէս պիտի սխալինք եթէ այս ըսենք. Եւրոպա որ Տաճկաստանցիէ մը շատ աւելի լաւ գիտէ, որ թուրքը չը բարեկարգուիր, զի կարողութիւն չունի՝ թողունք տրամադրութիւն եւ մի՞թէ չի փորձեցին այլ եւ այլ բարձրաստիճան պաշտօնեաներ գնել տալով թուրք վարչութեան մէջ.

Ինչո՞ւ զլանալ մեզ ուրեմն մեր ազգային ազատութիւն յորում պիտի կրնանք հսկայաքայլ յառաջադիմել ամէն տեսակէտով, երջանիկ ընել մեզ հետ եւ մեր երկրին ուրիշ ազգերն ալ առանց կրօնի եւ ազգի խտրութեան.

Եւրոպա տարբեր կը խորհի այսօր քան երբեք. տալ հային Հայաստանը, Մակեդոնիան մակեդոնացիին, Արաբիան արաբացիին, ինչ պիտի ըլլայ հետեւանքը. քայքայում եւ մահ թուրքիոյ, զի այդ երեք գլխաւոր ազգերէն զատ ուրիշ ո՞ր ազգեր կան թուրքիոյ մէջ, որ քիչ թէ շատ թիւով ու դիրքով իրենց անկախութիւնը խորհին.

Իրոց վիճակի այսպիսի փոփոխութիւնը քիւր չգար արդի Եւրոպայի շահերուն, որովհետեւ բոլոր պետութիւնք իրենք կուզեն, որ թուրքը փճանայ եւ շատ լաւ ալ գիտեն, որ

պիտի կորնչի անխնայ ու յիմար. տաճիկը. սակայն չեն շտապեր, իրենց փլան այսօր քան երբեք այսօր աւելի յայտնի կերեւի. այն է կամացուկ կամացուկ մէկ մէկ կտոր փրցնել անկէ եւ իրենց բաժին ծծնել մինչեւ որ Սուլթանը ըլլայ միայն անուանական եւ Թուրքիա իրապէս բաժնուած Եւրոպայի միջեւ, ու այսպէս օրին մէկը յանկարծակի ուրիշի մը ձեռք անցած՞ պիտի տեսնենք ինքզինքնիս։

Եւրոպան որ ծուռ կը նայէր ամեն անգամ, որ ռուսը տաճկին հետ կռուի կը բռնուէր եւ այսօր ինքն է որ անուղղակի կը կռուի տաճկին գոյութեան հետ։ Մասնաւորապէս Գաղղիան ինքն էր որ սուրով եւ գիրի ազգաց իրաւանց պաշտպան կը հրատարակէր եւ. այսօր ինքն է, որ իգիմաց Եւրոպայի յառաջ կը նետուի ու կը յայտարարէ որ այս կամ այն ազգին համար աշխատիլ չարժեր, այլ ընդհանուր երկրին համար, բան մը որուն Տէլգասէ ինք անգամ չի հաւատար, ի՞նչ կը նշանակէ այլեւս Եւրոպական տէրութեանց բանած ընթացքը մեզ նկատմամբ։

«Հայուն իսկական թշնամին ոչ թէ Սուլթանն է, այլ պաշտօնական Եւրոպան։

Ի՞նչ պիտի ընենք ուրեմն։

Խորհինք։

***

ԴԷՍԻՑ ԴԷՆԻՑ

—()—

Ցօղուածիս վերնագրին հաւատարիմ մնալու համար պիտի խօսիմ զանազան երկիրներու մէջ անցած դարձածներու վրայ, եւ կը խոստանամ Շարժումի յարգելի ընթերցողներուն շաբաթը մէկ անգամ տեղեկութիններ տալ ժողովուրդներու կեանքին մէջ տեղի ունեցած նշանաւոր երեւոյթներու մասին։

Նախ սկսիմ Պուլկարիայէ. պուլկար ժողովուրդը եւ կառավարութիւնը այս վայրկեանիս չափազանց յուզեալ վիճակի մը մէջ կը գտնուի։

Պուլկարիոյ մէջ կեղծ գրօշամաթուղթեր կը շինուին եղեր, և այդ կեղծարարներու պետը իրաւաբանութեան Տօքթ. մըն է, որ թէ ազգային երեսփոխան եղած է, թէ խմբագրապետ և թէ Մակեդոնիոյ մէջ պուլկար կառավարութեան գործակատար։

Ամենէն ցաւալին և սոսկալին այն է պուլկարներու համար, որ աս կեղծարարը ինքզինքը «բարենորոգիչ» կը հռչակէր և կուզէր քաղաքական նոր կուսակցութիւն մը հիմնել «բարենորոգիչ» տիտղոսով որուն նպատակը պիտի ըլլար Պուլկարիոյ պետական վարչութիւնը աղնիւ մաքուր և հաստատուն հիմերու վրայ՞ դնել։ Ու հաւատացողներ ալ կային. որ աննիւթապէս ճնշուած կուսակցական կռիւներէ յոգնած պուլկար ժողովրդին ցաւերով կը տառապի, Պուլկարիոյ ապագային համար կը խորհի։ Ու կը խաբուէր ոչ միայն ժողովրդի մարդը, այլ եւ պետական մարդիկ, որոնց մրաքէն անգամ չէր անցներ թէ Իօսէֆ կատարելագործուած չարլաթան մըն է։

. . .

Ռուսիա կը շարունակէ Ֆինլանտան խղդել. ֆինլանտացիներու Զարին մատուցած աղերսագիրը, որ հարիւր հազարներով ստորագրութիւններ կը կրէր, ոչ միայն օգուտ մը չը բերաւ այդ փոքրիկ բայց քաղաքաթրթուած ու շատ համակրելի ժողովրդին, այլ ընդհակառակը փոստակար եղաւ, որովհետեւ ռուս վարիչ շրջանը Զարին կրցեր է համզել, որ ֆիլանտացիներու աս վարմունքը անհնազանդութեան նշան է։

Ֆինլանտական զօրքը ջնջուեցաւ, ու դեռ շատ զատ ֆինլանտական ինքնորոյն ազգային հաստատութիններ պիտի ջնջուին, որովհետեւ Ռուսիոյ վարիչները հաստատ որոշած են ինքնավար Ֆինլանտիան ոչնչացնել։

Մէկ կողմէն հսկայ ռուս կառավարութիւնը իր ջնջող միջոցները կը զօրացնէ, միւս կողմէն ֆինլանտացի փոքրիկ ժողովուրդը առայժմ լռելեայն կը դիմադրէ անշուշտ յաղթութիւնը Ռուսիոյ կողմը պիտի ըլլայ, սակայն Ռուսիա առով իր սրտին մէջ ներքին մեծ անբուժելի վէրք մը կը բանայ որ ապագային աւելի պիտի մեծնայ ճնշումները ժողովուրդ մը կը խոնարհեցնեն առժամանապէս Վրէժխնդիր ճնշուածները յարմար պարագաներու մէջ շատ վտանգաւոր կը դառնան զիրենք ճնշողներուն համար։

. . .

Գերմանիոյ մէջ լեհերը շատ յուզուած են գերման կառավարութեան դէմ որովհետեւ վերջինս ծայրահեղ միջոցներու կը դիմէ լեհ նոր սերունդը գերմանացնել լեհական լեզուն դպրոցներէն ջնջելով. սահմանադրական գերման կառավարութիւնը լեհական լեզուն մեռցնելու համար նոյն միջոցները ձեռք առած է, ինչ միջոցներ որ միապետական Ռուսիա կը գործածէ Կովկասի հայերու վերաբերմամբ։ Լեհացիները Աւստրիոյ եւ Ռուսիոյ մէջ ցոյցեր ըրին Գերմանիոյ դէմ. Գերմանական երեսփոխանական ժողովի մէջ քանի մը երեսփոխաններ հարցապնդումներ ըրին Պիւլոֆի և բողոքեցին. սակայն Պիւլոֆ պատասխանեց՝ Գերմանիոյ հպատակը Գերմանացի պիտի ըլլայ։

Լեհաստանը մեր արիւնով գնուած է։

Եւ Սուլթան Համիտ այդ երկու կառավարութիւններուն կը հետեւի հայերու վերաբերմամբ, առանց կը քաջալերուի իր արիւնոտ գործերուն մէջ։

. . .

Թրանսվալի պատերազմը դեռ կը շարունակուի։ Պօէրները թէեւ նոյն արիութեամբ կը դիմադրեն սակայն եւ կը նուին։ Եւրոպական ամեն ժողովուրդներու համակրութիւնը օգուտ մը չի բերաւ այդ համակրելի հերոս ժողովրդին։ Պօէրները համոզուեցան որ Եւրոպան բան մը չի պիտի ընէ իրենց համար, եւ հիմա ինչպէս մութ լուրեր կը պատմին իրենք ուղղակի Անգլիոյ հետ բանակցութեան մէջ մտած են, այդ անգութ պատերազմին վերջ մը տալու համար։

Պօէրները կը հասնին. Անգլիա աժագին զոհողութիններ կըրնէ. դրամի մարդու, սակայն այդ չի արգիլեր իր թագաւորին օծումը շքեղ ընել։ Թագադրութեան հանդէսին համար 100 միլիոն ֆրանք պիտի ծախսուի։

Ու անգլիացի ժողովուրդը այդ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԶՈՒԱՌԻ ՄԸ ԿԱՂԱՆԴԻ ԳԻԶԵՐԸ

(Թարգմ. Գերմաներէնէ)

Կաղանդի Նուէր առ իմ

շատ սիրելի Լեւոնիկը.

Ծերուկ մը, Կաղանդի կէս գիշերին պատուհանին առջեւ կանգնած դառն և յուսահատ նայուածքով մը կը դիտէր դէպի վեր անշարժ և յաւէրժ շողշողուներիկինքը, դէպի վար լուռ, մաքուր և ճերմակ երկիրը, որու բնակիչներէն այս գիշեր ոչ մէկը այնքան տրտում, այնքան անքուն էր որքան ինքը, որովհետեւ ան տեսաւ այսօր իրեն համար փորուած գերեզման մը։ Ու գերեզմանը ծածկուած էր միայն երկարամէջ սարսիներու սլեւոր ձիւնով և ոչ թէ ծաղկաշ կեանքի կանաչ դափնիով։ Ծերուկին կեանքը պատկերացաւ իր առջեւ. որուն մէջ աւա՜ղ նա տեսաւ մոլորումներ և հիւանդութիններ, իր մարմինը ապականած էր, հոգին անապատի մը պէս դատարկ, կուրծքը թոյնով լեցուած, ծերութիւն մի լի դառն զղջմանքով։ Մանկութեան քաղցր օրերը երազի նման անցան անոր միտքով, ան յիշեց այն առաւօտը, երբ իր հայրը զինքը առաջին անգամ ըլլալով կենաց գահէն, կեանքի մէջ իրարմէ բաժնուող երկու ճամբաներ, ցուցուց։ Առաջինը առաքինութիւններու լուսեղէն ճամբան էր, որ դէպի անծածաւալ, խաղաղ երկիր մը կառաջնորդէր. հայրենիք մը, լուսեղէն և հարուստ։ Երկրորդը մոլութեան և ախտերու ճամբան էր, որ դէպի մութ խորվիրապ մը կառաջնորդէր, որու պատերէն թոյն կը կաթէր, օդը ծանր էր և խեղդիչ։ Ա՛խ, օձերը իր կուրծքը կը փաթթուէին, թոյնը իր լեզուին վրայ կը կաթէր, հիմա հասկցաւ հէգ թշուառը թէ ո՞ւր կը գտնուի։

Խելակորոյս և լեցուած խորին ախրութեամբ աղաղակ բարձրացուց առ երկինք և գոչեց. «Իմ երիտասարդութիւնը ինծ ետ տուր... հայր իմ, ինծ դարձեալ ցոյց տուր գահէն, և ես հիմա ուրիշ ճամբայ մը պիտի ընտրեմ»։ Բայց իր երիտասարդութիւնը և իր հայրը ալ չէին լսեր զինքը։ Նա տեսաւ ճահիճի մը վրայ շրջմոլիկ լոյսեր որոնք կը թափառէին և գերեզմանոցին վրայ կը մարէին, և ան ըսաւ. «Ասոնք իմ անցուցած յիմար օրերս են»։ Երկնքի վրայ սլացող գիսաւոր աստղ մը տեսաւ, որ վար ինկած միջոցին պլպլաց և գետնին վրայ փշրեցաւ։ «Այդ իմ աստղս է», ըսաւ ծերուկը կոտրած սրտով, և զղջմունքի օձերը խոցոտեց իր սիրտը։ Գրգռուած երեւակայութիւնը անոր աչքին կը ցուցնէր գիշերային աներեւոյթ ոգիներ, որոնք կտուրներու վրայ կը թափառէին։ Ահա՛ հողմաղացը կը բարձրացնէ թեւերը անոր գլխին մահու հարուած իջեցնելու համար, ահա գերեզմանատան մէջ ուրուական մը ծերուկին դիմագիծերը կառնէ։

Այս ներքին տաք կռուին ժամանակ կաղանդի նուագը լսուեցաւ աշտարակի վրայէն, ինչպէս մի քաղցր շարական, որմէ ծերուկը մեղմիւ ազդուեցաւ։ Ան կը դիտէր հիմա հեռաւոր հորիզոնը, լայնածաւալ երկիրը, հոգու աչքով կը տեսնէր իր երիտասարդութեան ընկերները, որոնք հիմա իրմէ երջանիկ և բաղդաւոր էին, այժմ անոնցմէ ոմանք ժողովրդի առաջնորդներ էին, ոմանք հայր սիրելի զաւակներու, բոլորն ալ պատուի տէր մարդիկ։ Եւ նա կը գանգատէր. «աւա՜ղ, եթէ ուզէի ես ալ կրնայի այս գիշեր առանց արտասուքի քուն մտնել... ափսո՜ս, ես ալ երջանիկ կրնայի ըլլալ»։ Ծերուկին գրգռուած յիշողութեան մէջ անոր այնպէս թուեցաւ, թէ ուրուականը որ իր կերպարանքը ստացած էր, գերեզմանոցին մէջ ոտքի կանգնեցաւ, և այն նախապաշարումին շնորհիւ, որ կաղանդի գիշերները աներեւոյթներ կը ցուցնէ, ուրուականը հետզհետէ սիրուն պատանիի մը կերպարանքը առաւ։ Ծերուկը դարձեալ յիշեց իր պատանեկութեան ծաղիկ օրերը։

Ալ անկարող էր նա այն կողմը նայիլ։ Աչքերը գոցեց, պաղ ձիւնին վրայ հեղեղի պէս արտասուք կը թափէր ու անմխիթար և խելակորոյս մեղմ կերպով կը յառաջէր. «ետ դարձիք երիտասարդութեանս օրեր»։

...... Եւ եղաւ որ երիտասարդութեան օրերը ետ դարձան, որովհետեւ ան կաղանդի գիշերը զարհուրելի երազ մը տեսած էր. ինք դեռ երիտասարդ մըն էր, միայն իր մոլորումները երազ չէին։

ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ

ամենուն կը տոկայ. բողոքող ակնիւ ձայները կը խեղդուին։ Հոգ չէ, պատերազմին մարդկային միս և դրամ մատակարարող ժողովուրդն է, պետութեան ամեն ծախքերը ժողովրդի քսակէն են, իսկ օգուտը, լօրտերը, դրամատէրերը և թագաւորական տունը։

ԿԷՏ

ԵՐԿՐՈՐԴ ՅԱՆԿ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ

(Պեշտոյի յիշատակի հրատարակութեան համար)։

16 դեկտ, 1901. ՇԱՐԺՈՒՄի խմբագրականին, որով անմահն Պեշտոյի յիշատակին կենսագրական մի գրքոյկ հրատարակելու հրաւէր կարդացած էի, կարդալով մտածմունքս գոնէ մասամբ ըլլայ իրականացած գտայ և արդարեւ կարժէ այդպիսի հայրենիք և անզուգական հերոսներուն յիշատակին ինչ որ ալ ըլլայ չի խնայել կանոնք անմահ պահելու ապագայ հայ սերնդին մէջ։

Ըստ յայտարարութեանդ փութացինք դիմել հանգանակութեան այն անձերէ, որոնք կարող են գնահատել Պեշտոյի և անոր նման քաջամարտիկ հերոսներու արժանիքն։

Ըստ. նուիրատուութիւնք յետագայ ցուցակին համաձայն որոյ գումարն 33 լէֆ է, կը փութամ ղրկել խմբագրութեանդ մաղթելով յաջողութիւն։

ԱՆՏՈՆ ՇԱՀՐԻԿԵԱՆ

Տ. Մանուկ Գազազեան 5 լէֆ
„ Տիգրան Վարդանեան 5 „
„ Խաչուշ Նիկողոսեան 5 „
„ Պետրոս Յարութիւնեան 5 „
„ Կարապետ Ալաճեան 5 „
„ Սարգիս Վարդանեան 3 „
„ Անտոն Շահրիկեան 5 „

Որպէս խմբագրութեանս քով կը կենրի, անցեալ 33 լէֆի հետ ընդամէնը 66 լէֆ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Թ. Բազարճըգ 8 Յունուար

«Իրաւունք»ի 95 թուոյն մէջ կարդացի Բերովբէ Ոսկերիչեանի գրութիւնը որ պարոնը «Շարժում»ի 377 թիւ. թղթակցութիւնս չեղերուն դրպչելով պարզ խոստովանութեանց հետ մէկտեղ խուսափողական միջոցներու դիմած և կարգ մը հայհոյութիւններ ու լուտանքներ տեղացուցած էր մեր գլխուն։ Թէև շատերուն ծանօթ է այս դէմքին խոստովանկիչ գործերը, սակայն բոլորովին դիմակը վար առնելը ինձ բաժին ինկեր է։

Ոսկերիչեան 1900 օգոստ. վերջերը Ֆիլիպէէն Բազարճըգ գալով յանձնարարականով մը տեղւոյս Ազգ. վարժ. հոգ. կը ներկայանայ. սակայն հոգ. վերահասու ըլլալով անոր Ֆիլիպէի մէջ ունեցած կեանքին չընդունեց. ատոր վրայ քանի մը իրեն նման անձնաւորութիւններ 30 լէֆի չափ ամսականով դասատու վարձեցին և հոս մնաց մասնաւոր տան մը մէջ 6—7 տղաքներ գրել խուն ժողուած մինչեւ վերջ աշխատեցաւ Ազգ. վարժարանի դասատու պ. Վաղարշ Գազանեանը ու և է միջոցներով հեռացնել և ինք անոր յաջորդել, խնդիր հանել տուաւ թէ նա վկայագիր չունի. այս մատնութեան վրայ անակնկալ տեղւոյս Իսբէքթօրէն հրաման եկաւ վարժարանը փակել. սակայն հոգ. չուտով այս հրամանին առաջքը առաւ. յետոյ սկսաւ ժողովուրդին մէջ երկպառակութեան որոմներ ցանել «Մուրհանդակ» և «Իրաւունք» լրագրաց մէջ կարգ մը թղթակցութիւններով տեղացող նկատմամբ անհեթեթ և զրպարտութիւններ՝ պաշտօնական մարմնոց դէմ նախատինքներ տեղացուց և եկեղեցի ու վարժարան «ախըռ» հռչակեց։

Նոր շրջանին մէջ վերջնականապէս իր նպատակին հասնելու մօտ քեռիին ներկայութիւնն օգտուելով, անոր հետ ձեռք ձեռքի տուած իրենց ճիւաղային խորհուրդներով 2 անգամ Ազգ. վարժ. փականքները կոտրել և ի վերջոյ ալ գիշերանց ամբողջ դպրոցին մէջ եղած գոյքերը թաղ. ձեռքով կողոպտել տուին... և այլն. Թէև այս գոյքերուն մէկ մասը վերադարձուած է, բայց տակաւին մէկ մասը պահեստի կը մնայ։

Ահաւասիկ այս եպերելի արարքները մատնանիշ ընելուս համար մեր ողորմելին չար կերպով մը արժանապատուութեանս հետ խաղալ կը յանդգնի, սակայն ի զուր։

Այժմ գանք Ոսկերիչեանի ստերը երեւան հանել. Նախ որպէս թէ հոկտ. վերջերը Ֆիլիպէի իսբէքթօրութենէն կանչուեր է... ո՞ւրկէ իմացեր է թէ իր անունով թուղթ մը ներկայացուեր է իբրեւ վկայագիր... ու իրեն բուն վկայագիրը ծոցէն հանելով կը ցուցնէ... և Տ. Իսբէքթօրը տեսնելով որ վատ դաւաճանութեան մը զոհ գացեր է... Ահա քօղարկեալ սուտ մը որուն յայտագումը պարզապէս խոստովանութիւն մ'է. Ա. իսբէքթօրութիւնը վկայագիրը ոչ թէ վարժապետէն այլ պաշտօնական մարմինէն՝ (հոգաբարձութենէն) և ոչ թէ հոկտ. վերջերը այլ շրջանի սկիզբները կը պահանջէ. Բ. քանի որ իրեն երեւակայած դաւաճանութեան հիմնակները գտնելու համար օրինական ոչ մի ձեռնարկ չէ ըրած և Գ. երկու ամիս սպասել ու ոչ ոքի չը հաղորդելը միթէ չապացուցանե՞ր թէ պարզապէս ստութիւն մ'է. ուստի հրապարակաւ խորհուրդ կուտամ Ոսկերիչեանի իր այդ երեւակայած կեղծ վկայագրի հեղինակը գտնելու համար արդարութեան դիմէ, ապա թէ ոչ իրաւունք կունենամ հիմակուընէ հրապարակաւ ճակատին ստութեան մակդիրը փակցնել.

Բ.րդ. «որը հինգ սանթիմ ճարելու անկարող է...» պահ մը ենթադրենք թէ ստոյգ եղած ըլլայ, սակայն ինքը որչափ աւելի ստոր կացութեան մէջ գտնուած է որ յուլիսի մէջ խանութս գալով սկսաւ պատմել թէ «եղբայր չնչին գումար մը կը վճարեն ինծի. և այնպէս մը ըրած են որ հաւատարմութեան դասերուն մէջ կարծես կապրիմ ինծի եկած անձնական նամակներն անգամ կը կարդան...» ի մէջ այլոց իր նիւթական դառն կացութիւնը պարզելով աղաչեց և 10 լէֆ փոխ առաւ. ասկէ կը հետեւի թէ Ոսկերիչեան իր գրածովը պարզապէս իր վիճակը մատնանիշ կընէ. որդէն ես իմ անկախ և ազատ գործս ունիմ. իսկ ինքը չոր հացի մը համար «Թուլանպաճի»ի մը և մի քանի վատհոգի արարածներու քծնելով կուզէ Ազգ. վարժ. դասատուի պաշտօնը յափշտակել, բայց անօգուտ, վարժարանը իրեն պէսներու բնակավա՞յր չէ։

Երկու խօսք ալ. Գեր. Գ. Ծ. Վ. Նալպանդեանի և Տ. Տիգրան Վարդանեանի մասին անտեղի յիշոցներ և զրպարտութիւններ տեղացուցած՝ և իր քեռին Պաղճեանը սուտ ջատագովութիւններով բարձրացուցած էր. հարկ կը համարիմ իմ բարեկամացս հասցէին ուղղուած չար բերանը պապանձեցնել. Նախ Գեր. Գ. Ծ. Վ. Նալպանդեան պարտաճանաչ և համակրելի հովիւ մ'է ու սիրուած բոլոր պուլկարահայոցմէ, իսկ իր քեռին ցնդած Պաղճեանը բառին բուն նշանակութեամբ... տիկ մ'է և իր խառնակիչ բնաւորութեամբը առհասարակ ատելի եղած է. Բ.րդ. Տիգրան Վարդանեան ծանօթ դէմքերէն մին է. հին Ազգ. աշխատաւոր մը, երկար տարիներէ ի վեր թէ ի գաւառս և թէ ի Պոլիս ուսուցչական պաշտօն վարած ու մեծ համարում վայելած, ասկէ զատ 4 տարիներ ալ տեղւոյս Ազգ. վարժարանի մէջ ուսուցչական պաշտօն վարած և առհասարակ ամենուն ալ համակրութիւնը շահած է, իսկ այժմ կրկին ներկայ շրջանիս բարձրագոյն հրամանի մը համաձայն Ազգ. վարժարանիս ուսուցիչ նշանակուած է։

Արդ՝ Բերովբէ Ոսկերիչեանի վերջնական անկումը իրեն և իրեններուն մեծ վիշտ պատճառեց որոնք շատ մը ստոր արարքներէն վերջ, զօրաճի խումբ մը սարքեցին որուն առաջին փորձը իմ վրաս կատարուեցաւ. գիշեր մը սրթայրին մէկը չուկայէն վերադարձիս գլխուս գաւազանի մը հարուած իջեցուց ու փախաւ, յետապնդեցի սակայն մթութեան մէջ անյայտ եղաւ. Բ.րդ. անգամ Տ. Վարդանեանի գլուխը վիրաւորեցին եկեղեցւոյ շրջափակին մէջ, որու մասին պուլկ. թերթերէն «Մանք» ինչպէս «Ուեթրօ» գրեցին. Գ.րդ. դեկտ. 31ի օրը երկու սրիկաներ որ ցոփելով յանկարծակի խանութիս մէջ զիս պաշարեցին, երկար մաքառումէ ետքը բոլոր պուլկար գրագիրներու ժողուեցան ի մէջ այլոց անձնուէր բարեկամներ և հացագործ Մինչօն և իր տղան Քօցէն անմիջապէս խանութս մտնելով ազատեցին զիս այս չարագործներու ձեռքէն որոնք միայն գրպանէս 15 լէֆ դրամ յաջողած էին փրցնել. այս սրիկաները արդարութեան ատեանին յանձնած ենք։ Զի մոռնամ ըսել որ միեւնոյն խմբակէն սրիկայ մ'ալ երէկ գիշեր Գրիգոր Էնֆիէնճեան անուն ազգայնուն տանը ապակիները կոտրած է և այլն։

ԱՆՏՈՆ Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ռուսիոյ Նոր Նախիջեւանի հայոց բարեգործական ընկերութիւնը անցեալ տարի 10000 րպ. վճարած է դպրանոցի շինութեան համար և 7000 րուպլի ալ 100—120 աշակերտներու ուսումնական պէտքերու և զգեստի համար։

— Ամերիկայի Բրօվիտէնս քաղաքի հայերը 100 տոլար ղրկեր են Մեղրէի ազգային վարժարանին։

— Իզմիրի քաղաքական ժողովոյ եւ որբախնամին անդամները 24 ոսկի նուիրեր են որբանոցին։

— Պաքուցի հարուստ Աւետիս Ղուկասեան տաս հազար րուպլի կտակեր է որուն տոկոսը գրական ընտիր երկասիրութեանց իբր մրցանակ պիտի տրուի։

— Կըսուի թէ ազգային կեդրոնական վարչութիւնը նորէն օրինական գործողութեան պիտի ձեռնարկէ Սսոյ կաթողիկոսական խնդրոյ մասին, որովհետեւ և

... պաստ ազգային վարժարանին նուագահանդէս մը տրուեր է տեղւոյն երիտասարդներու կողմէն և 240 մէճիտի հասոյթ մը գոյացեր է։

— Պարսկաստանի գահաժառանգը, որ և Ատրպատականի ընդհանուր կառավարիչն է, Թաւրոնը շատ կը սիրէ։ Իշխանին գոհացում տալու համար Դաւրիժի հայ դպրոցներու հոգաբարձութիւնը ծնայուն թատրոն մը հաստատեր է։ Ներկայացումները ֆրանսերէն կը տրուին։ Վերջերս ներկայացուցեր են Վիկտ. Հիւկոյի «Անժէլօն»։ Գահաժառանգը ներկայ եղեր է իր ամբողջ ընտանիքով։ Շատ գոհ ծնացեր է և խնդրեր է որ նոյն թատերախաղը իր պալատին մէջ խաղան։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Նախարարութիւնը որոշած է մի միլիոն լիրայի փոխառութիւն ընել Մէկքայի երկաթուղիին շինութիւնը լրացնելու համար։ Այդ որոշումը վաւերացուած է Սուլթանի իրատէով։

— «Բարի Նուվվէլ» կիմանայ որ Եմէնի մէջ թրքական հետեւակ զօրքի ամբողջ վաշտ մը ջնջուեր է արաբ ապստամբներու ձեռքով։ Արաբները փորձի հրացաններով զինուած եղեր են։

— Գերմանական թերթ մը կը հաղորդէ որ Անգլիա կը ջանայ Թիւրքիայէն արտօնութիւն ստանալ հեռագրական գիծ մը անցնելու, Թրքական հողին վրայէն, մինչև Ֆաս, Պարսից ծոցին քովը։

ԱՆԴՐԱՆԻԿԻՆ ՄԱՍԻՆ (ԲՐՕ ԱՐՄԷՆԻԱՑԷՆ)

Երբ Խոսրով վարդապետը վանք դացեր է Անդրանիկին հետ բանակցելու համար, Մուշի հերոսը զայն իրեն հեռաւոր թուրք գոմիսէրներու հետ միասին նախ սենեակի մը մէջ փակեր է, ապա, իր ձեռքովը սպաննուած Խալիլ Պէսէրին Մէճիտիյէի շքանշանը կրելով ներկայացեր է պատգամաւորներուն, ու յայտարարեր է որ ինք է Խալիլ Պէսիր քիւրտը սպաննողը եւ աւելցուցեր է.

1. Ինք և իր խումբը ապստամբներ չեն, այլ իրենց և քիւրտերու զոհ հայրենակիցներուն կեանքերու պաշտպաններ.

2. Իրենք երբէք գիւղեր չեն թալանած, սուրհանդակներու

3. Իրենք են սպաննած Խալիլ Պէսիրը և ուրիշ երեք քիւրտեր որոնք Շրչանամերկի կոտորածին հեղինակներ եղած են։

4. Ընդհակառակը քիւրտերն են որ անթիւ թալաններ, բռնաբարութիւններ և կոտորածներ կընեն Մուշի և Սասունի բոլոր գիւղերուն մէջ։

5. Իրենք կը ճանչնան Սուլթանին իշխանութիւնը, սակայն մէկ Սուլթանը կը բաւէ, և չեն ուզեր քիւրա—պետ Սուլթաններ որոնք Սուլթանին պէս իրենց տրամադրութեան տակ ունին հայերուն կեանքը և ինչքը։

6. Անձնատուր կըլլան եթէ երկրին հայերուն և իրենց կեանքին ապահովութիւնը երաշխաւորուի։

Խոսրով վարդաբետը Մուշ վերադարձած է և Անդրանիկին ըսածները յայտներ է Վալիին, զօրքերու հրամանատարին, Անգլիական և Ռուսական հիւպատոսներուն։

Թուրք իշխանութիւնները մը-տադրուեր են երկրորդ անգամ պատգամաւոր ղրկել, սակայն Անդրանիկ նախընթաց գիշեր վանքէն հեռացեր է։

Պաշարման միջոցին Սնդրանիկի խմբէն երկու հոգի սպաննուեր է. իսկ զօրքերու կողմէն երկուսը սպաննուեր և երկուսն ալ վիրաւորուած են։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Խուզարկութիւններ տեղի ունեցած են նաեւ Սոֆիայի պետական տպարանին մէջ կեղծ դրոշմաթուղթերու համար։

Տպարանին գլխաւոր կառավարիչը պաշտօնէն արձակուած է։

— Ձերբակալուած է նաեւ հազարապետ Պուրէվսկի։

— Ձերբակալուածներէն մէկուն Քարանովի խոստովանութեան վրայ, անոր տնէն 500 դրոշմաթուղթ գտեր։

«Մեսաժէր տը Պալքան» Ֆրանսերէն թերթը կը հաղորդէ որ ծխախոտի կեղծ պանտրոլներ ալ կը շինուին եղեր։

«Բոշթա» թերթը կը հաղորդէ որ դրոշմաթուղթ շինողները որոշած են 50 լէվլոց պանքնոթներ ալ շինել։

ԻՏԱԼԻԱ

Նաբոլիի մէջ զրոյց կը պտտի որ գարունը Իտալիան 20000 զօրք պիտի ղրկէ Թարապլուզը գրաւելու համար։

ԹՐԱՆՍՎԱԼ

Անգլիացիները գերի բռներ են պոէր բաւական կարեւոր զօրավար Պէն Վիլժօէն և անանկ տեղ մը, ուր մինչեւ հիմա Անգլիական զօրքը չէր կրցեր հասնիլ։

Ֆիլիպէի «Հայկական երգեցիկ խումբը» աս շրջանին մէջ վերակսած ըլլալով արդէն իր պարապմունքները, ձեռնարկած է նաեւ պարբերաբար հրատարակելու եւրոպական ձայնագրութեամբ հայկական հին եւ նոր քառաձայն երգեր, մաքուր թղթի վրայ, յստակ վիմագիր։

Այս առթիւ երգեցիկ խումբի վարչութիւնը-Նարկայիս կը յայտնէ Պուլկարիոյ և արտասահմանի երաժշտասէր հայ երիտասարդութեան, որ եթէ ատ երգերէն փափագողներ կան, հաճին դիմել վարը նշանակուած հասցէին՝ վճարելով «մէկ թուղթին» համար 20 սանթիմ. փոստի ծախսը մեր վրայ։ Կան երգեր որոնք մէկէ աւելի թուղթերէ կը բաղկանան։

Արտասահմանի համար 35 սնթ.

Ֆիլիպէ վարչ. «Հայկ. երգեցիկ խումբին»։

Հասցէ՝ Agop Sivadjian Philippople

ՑԱՑԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայդելբերգում հիմնուել է մի գրադարան, որ նպատակ է գրել ծանօթացնել արտասահմանի հայ ուսանողութեան եւ ընդհանրապէս հետաքրքրող անձանց հայոց ներկայ կեանքին վերաբերեալ հայերէն եւ օտար լեզուով լոյս տեսած գրքերի հետ։ Գրադարանը ունի յիշեալ նպատակով հրատարակած գրքերի մի համեստ թիւ որի համար յայտնում ենք նուիրատու անձանց մեր խորին շնորհակալութիւնը եւ խնդրում ենք այն անձանց հատատութիւններին, որոնք կամենում են գրքերով եւ դիրատուութիւններով օգնել գրադարանին, բարեհաճին ուղարկել հետեւեալ հասցէով՝

A. Iohannessian Heidelbery Kaiser 31 № 5

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս. Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով

Իւնիոն տի Զէդիւտիան Սրմ.
Լէօրոր դիւ տը Լէֆօլ տը Շիմի 2

Սուխ Ժընէվ
Կարգոդիր Ցանձնաժողով

ԱԶԴ

Կը ծախուի 1896ին փետր. 2ին Իշխան Պորիսի ժկրաութեան առթիւ ապուած գործածուած նամակագրոշմներ 1—5—15—25 սանդիմ։

Դիմել՝ ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏԵԱՆ
Վառնա

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուայցեստոմս, հասցէստոմս, նամակագլուխ, հարեանեկան հրաւիրագիր, մահագդ։

Գիները յոյժ գիւրամատչելի։ Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՑԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Sof. Վ. Տոսունեանցի եւ Ե. Թոփչեանցի „Die sozial-ökonomich Türcei"

Հասարակական աշխատութիւնը Հայկական հարցի եւ ընդհանրապէս Թուրքիայի մասին։

Գինը 2 մարկ ճանապարհածախսով

Դիմել՝ Berlin, Verlagshandlung R. Prager, W. Ն 7

L'EUROPEEN

Շաբաթաթերթ քաղաքական, միջազգային իրաւունքի, ընկերական հարցերու, գրական եւ դեղարուեստական։

Տարեկան 15 ֆր.
Վեցամսեայ 8 ֆր.
Հասցէ 24 rue Dauphine Paris VI

ԳՈՒԹԱՆ

Հանդէս ամսեայ, հողագործական, գիտական եւ արուեստագիտական

Հիմնադիր տնօրէն
Գարեգին Ը. Մեծատուրեան

Հրատարակուած է Դ. տարի թիւը, շահեկան բովանդակութեամբ։

Տարեկան բաժնեգինն 12 ֆր. դիմել հիմնադրին, 23 rue de la Collegiale

ԱԶԴ

Բաղէշի կուսակալութեան պատկանեալ Ցուրդափ գիւղէն Պէկօ Աւատուրեանի, հասատակաղմ շէկ պէխով ու յօնքերով, 6 ամսէն ի վեր ուր լինելն անյայտ է։ Այն եթէ ճանաչողներ կան յանուն մարդասիրութեան թող իր այրի տիկին մայրը մխիթարել հաճին, անոր ուր գտնուիլը խմբագրութեանս հաղորդելով։

Отговорникъ :

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность"— Варна